ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/130

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.09.2018թ. թիվ 01.1/26-3/15886-18 գրությամբ «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտեի 30.08.2018թ. թիվ 02/16.4/4324-18 և 31.08.2018թ. թիվ 02/16.4/4349-18 գրությունների հիման վրա, 03.09.2018թ. թիվ 01.1/26-3/15886-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերություններին (այսուհետ՝ Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունների ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունները ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել են, որ ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը (այսուհետ Կոնսորցիում):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.08.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստում արձանագրվել է, որ Կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում առկա են մի շարք անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

Արձանագրված անհամապատասխանությունների նկատմամբ Ընկերությունները հայտնում են հետևյալը.

ա) «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունների կողմից համատեղ գործունեության պայմանագիրը (կոնսորցիումը) ձեռագիր ստորագրվել և կապույտ կնիքով կնքվել է 15.08.2018թ., սակայն Կոնսորցիումի կողմից թյուրիմացաբար շտկման ժամանակ Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկվել է համատեղ գործունեության պայմանագիր՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված և թվագրված 18.08.2018թ.:

բ) Շտկված և ներկայացված Հավելված 1-ում՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում, որտեղ նշված չի եղել Կոնսորցիումի 2-րդ անդամի հասցեն և բանկային վավերապայմանները, չի ենթադրում, որ «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված որևէ դրույթ:

Ընկերությունները ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել են մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՍՑ-ԱՄ-2018/130 ծածկագրով նախաձեռնված ընթացակարգը:

Ընկերությունները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/130 ընթացակարգի շրջանակներում 07.09.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել են իրենց ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստերը.</u>

ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտեն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.08.2018թ. թիվ 02/16.4/4324-18 և 31.08.2018թ. թիվ 02/16.4/4349-18 գրություններով հայտնել է, որ ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման նպատակով 06.08.2018թ. կազմակերպված «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումին ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Կոնսորցիումի հայտը մերժվել է՝ ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունների մի մասը չշտկելու հիմքով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/130 ընթացակարգի շրջանակներում 07.09.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2018/130 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2018/130 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 16.08.2018թ. հայտ է ներկայացրել «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.08.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

ա) բացակայում է Ընկերությունների համատեղ գործունեության պայմանագրի պատճենը,

բ) Հավելված 1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին,

գ) 1-4 հավելվածներում հնարավոր չէ պարզել «Արտյոմ Մինասյան» ՍՊԸ-ի տնօրենի էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու հանգամանքը (էլեկտրոնային ստորագրությունն ակտիվ չէ):

Նույն արձանագրությամբ որոշվել է Կոնսորցիումին ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.08.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2-3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Կոնսորցիումի հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.09.2018թ. թիվ 01.1/26-3/15886-18 գրությունը, ՀՀ

ԿԱ քաղաքաշինության կոմիտեի 30.08.2018թ. թիվ 02/16.4/4324-18 և 31.08.2018թ. թիվ 02/16.4/4349-18 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 7-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ ***մասնակիցը*** կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ***հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սրանձնված պարտավորության խախտում:***

Կարգի 41-42-րդ կետերի համաձայն՝

41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 7-րդ կետի 7.9-րդ և 9.10-րդ ենթակետերի համաձայն՝

7.9 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7.10 Եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով

16.08.2018թ. հայտ է ներկայացրել «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.08.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

ա) բացակայում է Ընկերությունների համատեղ գործունեության պայմանագրի պատճենը,

բ) Հավելված 1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին,

գ) 1-4 հավելվածներում հնարավոր չէ պարզել «Արտյոմ Մինասյան» ՍՊԸ-ի տնօրենի էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու հանգամանքը (էլեկտրոնային ստորագրությունն ակտիվ չէ):

Նույն արձանագրությամբ որոշվել է Կոնսորցիումին ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ: Էլեկտրոնային ստորագրությունների առկայությունը պարզելու համար Կոնսորցիումին նաև առաջարկվել է ներկայացնել տեղեկանք, համաձայն որի վերջինիս կողմից ներկայացված 1-4 հավելվածները հաստատված են նաև «Արտյոմ Մինասյան» ՍՊԸ-ի տնօրենի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.08.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2-3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Կոնսորցիումի հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը՝

1) համատեղ գործունեության պայմանագիրը կազմված է 18.08.2018թ. և կողմերի կողմից վավերացված 22.08.2018թ., այնինչ Կոնսորցիումի հայտը armeps համակարգ մուտքագրվել է 16.08.2018թ.:

2) Ներկայացվել է Հավելված 1-ի նոր տարբերակ, որի մեջ նշված չեն Կոնսորցիումի 2-րդ անդամի հասցեն և բանկային վավերապայմանները:

3) Պահանջվող տեղեկանքի փոխարեն Կոնսորցիումի կողմից ներկայացվել են կազմակերպությունների տնօրենների էլեկտրոնային ստորագրություններով 22.08.2018թ. դրությամբ հաստատված 1-4 հավելվածների նոր տարբերակներ (այդ թվում՝ գնային առաջարկ):

Այսպես՝ «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունները «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցել են կոնսորցիումով: Միևնույն ժամանակ Ընկերությունները հայտով չեն ներկայացրել համատեղ գործունեության պայմանագրի պատճենը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն, առաջնորդվելով Կարգի 41-րդ կետի պահանջներով, ծանուցել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ: Ընկերությունների կողմից ներկայացվել է համատեղ գործունեության պայմանագրի պատճեն, որի ամսաթիվը նշված է եղել ***18.08.2018թ.***, մինչդեռ կոնսորցիումը հայտը ներկայացրել է ***16.08.2018թ.:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: ***Նման դեպքում հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր:***

Այսպիսով՝ կոնսորցիումի կողմից ներկայացված համատեղ գործունեության պայմանագիրը, համաձայն պայմանագրի վրա նշված ամսաթվի կնքվել է կոնսորցիումի կողմից հայտը ներկայացնելուց հետո: Մինչդեռ հրավերով սահմանվել է, որ եթե մասնակիցները ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակիցը, ապա հայտով ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագրի պատճենը: Հետևաբար համատեղ գործունեության պայմանագիրը չի կարող կնքվել հայտը ներկայացնելուց հետո:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ ***մասնակիցը*** կամ

առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ***հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Հրավերի 4-րդ կետի 10-րդ ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Այսպիսով՝ «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունների կողմից ըստ էության չի ներկայացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով, 32-րդ կետի 7-րդ ենթակետով և հրավերի 4-րդ կետի 10-րդ ենթակետով նախատեսված համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, քանի որ ներկայացված կոնսորցիումի պայմանագիրը չի կարող համարվել պատշաճ: Այսպիսով՝ արձանագրում եմ, որ առկա է Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչ վերաբերում է Ընկերությունների կողմից գնման գործընթացի մասնակցության դիմումի մեջ կոնսորցիումի մյուս անդամի հասցեն և բանկային տվյալները նշված չլինելուն, ինչպես նաև հայտում առկա էլեկտրոնային ստորագրության վավեր լինելու վերաբերյալ տեղեկանք չներկայացնելուն, ապա ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, գտնում է, որ դրանք չեն կարող դիտարկվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը

սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝ մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերությունները «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում խախտել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն, ուստի առկա են Ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.09.2018թ. թիվ 01.1/26-3/15886-18 գրությամբ «Արտյոմ Մինասյան» (ՀՎՀՀ՝ 08616085) և «ԱՇԿԱՐ» (ՀՎՀՀ՝ 02807433) ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արտյոմ Մինասյան» և «ԱՇԿԱՐ» ՍՊ ընկերություններին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**